**Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլի 11-12-րդ դասարանի թեստի**

Պատասխաններ

| | |
|---|---|
| 1. | 3 |
| 2. | 1 |
| 3. | 2 |
| 4. | 2 |
| 5. | 2 |
| 6. | 3 |
| 7. | 4 |
| 8. | 3 |
| 9. | 2 |
| 10. | 4 |
| 11. | 1 |
| 12. | 1 |
| 13. | ա, ե, է |
| 14. | բ, գ, դ |
| 15. | ա, դ, է |
| 16. | ե,ա,բ,դ,գ,գ,է |
| 17. | 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-գ |
| 18. | 1- 4200, 2- Մուսա, 3-Տիգրան Անդրեասյան, 4- 1915 թ. սեպտեմբերի 10-ին, 5- Պորտ Սաիդ |
| 19. | **Դրական**<br>1. Քաղաքաշինություն և ենթակառուցվածքներ. Ստեղծվել են նոր քաղաքներ, որոնք հետագայում դարձել են խոշոր տնտեսական և մշակութային կենտրոններ:<br>2.Կրթություն և մտավորականության ձևավորում. Տեղացիները հնարավորություն են ստացել կրթություն ստանալ եվրոպական բարձրագույն հաստատություններում՝ ձևավորելով նոր մտավորական խավ:<br>3.Տնտեսական առաջընթաց. Տեղացի բնակչությունը ներգրավվել է տնտեսական գործունեության մեջ, ինչի շնորհիվ առաջացել է տեղական ձեռնարկատերերի խավ:<br>4.Ռազմական փորձ. Գաղութների բնակչությունը, ծառայելով կայսերական բանակներում, ձեռք է բերել մասնագիտական հմտություններ և ռազմական փորձ, ինչը հետագայում օգտագործվել է նորանկախ պետությունների բանակաշինության մեջ: |

| | |
|---|---|
| | 5.Լեզվական հաղորդակցություն. Գաղութատեր երկրների լեզուները (անգլերեն, ֆրանսերեն և այլն) դարձել են միջէթնիկական շփման լեզուներ՝ հեշտացնելով հաղորդակցությունը տարբեր ժողովուրդների միջև:<br>**Բացասական**<br>1. Ազգային ինքնագիտակցության կորուստ. Օտար մշակույթի և լեզվի պարտադրման հետևանքով շատ ժողովուրդներ մոռացության են տվել իրենց ավանդույթներն ու մայրենի լեզուն:<br>2. Կրոնական և մշակութային պարտադրանք. Հաճախ բռնի ուժով կամ պարտադրանքով տարածվել է տիրապետող տերության կրոնը:<br>3. Բնիկների իրավունքների սահմանափակում. Եվրոպացի վերաբնակիչների հաստատման պատճառով տեղացիները երբեմն դարձել են փոքրամասնություն սեփական հայրենիքում:<br>4. Տասնյակ էթնիկ խմբեր ամբողջությամբ կորցրել են իրենց դիմագիծը և ձուլվել գողութատեր ազգերին: |
| 20. | **Արտավազդ II**<br>Ք.ա. 54 թ. դաշինք կնքեց Պարթևստանի հետ:<br>Ք.ա. 36 թ. Արտավազդը զորք տրամադրեց Անտոնիոսին, սակայն տեսնելով նրա ռազմավարական սխալները և հռոմեական պաշարողական մեքենաների ոչնչացումը, Արտավազդը իր զորքը հետ քաշեց՝ Հայաստան խուսափելով ավելորդ զոհերից:<br>**Արտաշես II**<br>Դաշինք կնքեց պարթևների հետ:<br>Գրավեց Ատրպատականը: |
| 21. | **Աքբար**<br>Հարկային բարեփոխում. Հարկերի չափերը ճշտելու նպատակով անցկացվեց հողերի ցուցակագրում, որոշվեցին հողի որակը և մշակվող տարածքի չափերը: Բնամթերային հարկի փոխարեն մտցվեց դրամական հարկ:<br>2. 1589 թ. անցկացրեց կրոնական բարեփոխում: Միապետական իշխանությունն ամրապնդելու և կրոնական տարաձայնություններին վերջ տալու նպատակով նա փորձեց իսլամը և հինդուիզմը միացնել ու ստեղծել «աստվածային մեկ հավատք»:<br>Աքբարն անցկացրեց նաև վարչական բարեփոխում: Տեղական կառավարումն ամրապնդելու համար նա երկիրը բաժանեց 15 մարզերի:<br>**Շահ Աբբաս I**<br>1. Նրան հաջողվեց եվրոպացի մասնագետների օգնությամբ ստեղծել նոր կանոնավոր բանակ, որի զինվորները հավատարիմ էին շահին, զինված և մարզված էին եվրոպական բանակների օրինակով:<br>2. Շահ Աբասը խրախուսեց նաև առևտրի զարգացմանը: Զարգացավ Իրանի՝ Պարսից ծոցի ափին գտնվող Բանդար–Աբաս նավահանգիստը, որը դարձավ միջազգային առևտրի կարևոր կետերից մեկը տարածաշրջանում: Միջազգային առևտրում մեծ կշիռ ձեռք բերեցին նաև հայ վաճառականները: |

| | |
|---|---|
| 22. | 1. Բեռլինի պատի քանդումը, 1989 թ. նոյեմբերի 9<br>2. Բեռլինում, Այս տեսարանը խորհրդանշում է Սառը պատերազմի ավարտը, երկբևեռ աշխարհակարգի փլուզումը վերացումը:<br>3. Գերմանիայի վերամիավորումը. 1990 թ. հոկտեմբերի 3-ին, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը (ԳԴՀ) և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը (ԳՖՀ) պաշտոնապես վերամիավորվեցին մեկ պետության մեջ:<br>Սոցիալիստական ճամբարի փլուզումը. Այս իրադարձությունը շղթայական ռեակցիա առաջացրեց Արևելյան Եվրոպայի երկրներում (Լեհաստան, Հունգարիա, Չեխոսլովակիա և այլն), ինչը հանգեցրեց կոմունիստական վարչակարգերի տապալմանը և, ի վերջո, ԽՍՀՄ փլուզմանը: |
| 23. | 1. Երևանի համաձայնագիր, 1920 թ. դեկտեմբերի 2:<br>2. Դրոն և Լեգրանը, 1400 սպաների ձերբակալությունը և աքսորը:<br>3. Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտությունը,<br>11-րդ Կարմիր բանակի Հատուկ գնդի մուտքը Հայաստան: |
| 24. | 1. 1-Մեծ Բրիտանիա, 2- Գերմանիա, 3-Ռուսաստան, 4-Ֆրանսիա, 5-Ճապոնիա, 6-Չինաստան<br>2. Խմորեղենը խորհրդանշում է Չինաստանը, որը մյուս մեծ տերությունները փորձում են բաժանել միմյանց միջև:<br>3. Չինաստանի ստերեոտիպային պաշտոնյա, ով ձեռքերը վեր բարձրացնելով փորձում է թույլ չտալ Չինաստանի մասնատումը: |
| 25. | 1. Թուրքմենչայի պայմանագիր, Ռուսական կայսրություն և Պարսկաստան:<br>2. 1826-1828 թթ. ռուս-թուրքական պայմանագիր, 1828 թ. փետրվարի 10-ին:<br>3. Երևանի և Նախիջևանի խանությունները անցան Ռուսական կայսրությանը: |